բաղում անդամ 'ի պահանջել նոցա 'ի կանանց և 'ի տղայոց և յօտարաց, որք ոչ էին հպատակ Օսմանեան Տէրութեան, լինէր վէճ և խռովութիւն. ուստի առ 'ի բառնալ զայս անկարգութիւն, Փոխանորդք յանձն առին 'ի տասն ամաց հետէ զահմանեալ տուրս վճարել դռնապանաց, և փոխանակ մի մի փարայի, զկնի Զատկի տալ 2000 դահեկան յերկուց վանաց եւ դռնապանաց չպահանջել այլ եւս ինչ ոչ յուխտաւորաց և ոչ 'ի միաբանաց, և ոչ յայլոց ով ոք և իցէ. 'ի հաճիլ երկուց կողմանց այսմ պայմանագրութեան՝ Դատաւորն գրով հաստատեաց 'ի ١١ Շաբան. ١٢٥٩.

Ի սմին ժամանակի Յոյնք որսացեալ 'ի կողմն իւրեանց զԲդեշխն Երուսաղէմի զՀայտար Փաշա, առին հրաման 'ի նմանէ նորոգել զվանօրայս Թուով 6։ Յետ նորոգելոյ զմին՝ ձեռն արկին նորոգել զվանս Հայր Աբրահամու, որ յառաջագոյն Վանք էր Հապէշաց. 'ի նորոգութեան ասա քակեցին զտանիս Ս. Յովհաննէս եկեղեցւոյն Հայոց և բարձին զքարինս նորա, կամելով հաւասարել զայն տանեաց իւրեանց, եւ զի տանիք Ս. Յովհաննու բարձր էր կանգնաւ Հափ քան զայլս, և 'ի կամել հաւասարել զայն, նրբանայր առաստաղ եկեղեցւոյն, և յեղանակի ձմրան անձրեւաց հետեւէր քանդումն և աւերումն։ Զաքարիա Պատրիարք բողոք եբարձ առ Դատաւորն զայսմ անիրաւ յափշտակութենէ Յունաց, զնոյն արար և առ Հայտար Փաշա, այլ նա մերժեաց յերեսաց իւրոց զպատգամաւորս նորին, պատճառելով թէ ծախք նորոգութեանց յարքունուստ են. այսպիսի հնարիւք յառաջացուցանէ զգործ Յունաց, և նոքա 'ի ծածուկ վճարէին զդրամս։ Տեսեալ Հայոց զհնարս Բդեշխին, դիմեցին առ Դատաւորն, և վաւերական գրովք ցուցին զիրաւունս, և թէ ո՞րպէս տիրեալ են եկեղեցւոյն, և 'ի ժամանակս ժամանակս նորոգեալ եւ չինեալ 'ի ներքուստ եւ արտաքուստ, Դատաւորն երկիցս չոքաւ բազմութեամբ 'ի տեղին, և արար մանրամասն քննութիւն, ընդ որս էր և Բդեշխն, և քաջ ծանեաւ զիրաւունս Հայոց 'ի գրոց և 'ի գրից տեղւոյն. խնդրեցաւ գիր և 'ի Յունաց, եւ նոքա ոչ կարացին մատուցանել ինչ, այլ պնդէին թէ օդն և տանիս եկեղեցւոյն մեզ պատկանի, զի կից է տանեաց մերոց.